ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ Է ՄԱՏՈՒՑՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԽԱՉԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՈՐԴԻ՝ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

01.11.2021 19:38

Հայրենիքի պաշտպանության համար փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված հարգանքի տուրք մատուցելու համար **2021 թվականի նոյեմբերի 01-ին** ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմերը այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները ծաղիկներ խոնարհեցին արցախյան երկրորդ պատերազմում զոհված Միքայել Դանիելյանի շիրիմին:

Փաստաբան Խաչիկ Դանիելյանի որդի Միքայել Դանիելյանը հերոսաբար կռվել և զոհվել է Մարտակերտի դիրքերում՝ 2020թ. Նոյեմբերի 1-ին ԱԹՍ հարվածից: Միքայել Դանիելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական Ծառայություն» և «Արիության Համար» շքանշաններով:

Հ.Գ. Փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցելու մեր հերոսների ընտանիքներին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })